«ԴԵՐԺԱՎԱ-Ս» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2022

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9
2021թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2021թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Վերապահումով կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում *«Դերժավա-Ս»* ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2021թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք ստանձնել ենք Ընկերության 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացումն այդ ամսաթվից ավելի, քան վեց ամիս հետո, ուստի հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման գործընթացին տարվա սկզբում և վերջում: Մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք պաշարների առկայության և քանակության վերաբերյալ 2020թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են համապատասխանաբար 1,237,495 և 1,108,625 հազար ՀՀ դրամ գումարներով: Քանի որ պաշարների մնացորդների մեջ հնարավոր անճշտությունը կարող է ազդել տարվա շահույթի ցուցանիշի վրա, բացի այդ ցուցանիշներից, մենք չենք կարող գնահատել թե ինչպիսի ճշգրտման կարիք կարող է լինել նաև տարվա շահույթի գծով:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարելու Ընկերությունը, կամ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ընկերության տնօրենը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ,

որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունն այլևս չհամարվի անընդհատ գործող:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Ընկերության տնօրենների խորհրդին աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արթուր Հարությունյան
Տնօրեն

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան
22 սեպտեմբեր 2022թ.

«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ»
"ЭЙ-ЭН АУДИТ"
"A-N AUDIT"
01529594

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Ծան.	31.12.2021թ.	31.12.2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	5,096,843	5,097,312
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	7	133,483	211,346
Ոչ նյութական ակտիվներ		3,918	4,524
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**5,234,244**	**5,313,182**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	1,108,625	1,237,495
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	11	3,185,386	6,828,828
Տրված ընթացիկ կանխավճարներ		311,111	113,126
Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ	8	2,878,944	1,033,315
Դրամական միջոցներ	12	65,060	42,137
Այլ ընթացիկ ակտիվներ		34,258	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**7,583,384**	**9,254,901**
Ընդամենը ակտիվներ		**12,817,628**	**14,568,083**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կանոնադրական կապիտալ		513,415	488,415
Կուտակված շահույթ		3,638,092	3,087,237
Պահուստային կապիտալ		89,509	89,509
Ընդամենը սեփական կապիտալ		**4,241,016**	**3,665,161**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր	13	3,052,923	4,034,112
Վարձակալության գծով պարտավորություններ	7	379,639	635,215
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	284,134	287,070
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**3,716,696**	**4,956,397**
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	14	3,883,402	4,755,137
Վարձակալության գծով պարտավորություններ	7	329,386	468,902
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	15	546,499	640,109
Շահութահարկի գծով պարտավորություն		65,145	40,593
Ընթացիկ պահուստներ	16	35,484	41,784
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**4,859,916**	**5,946,525**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**12,817,628**	**14,568,083**

Գլխավոր տնօրեն

Ստանիսլավ Հովակիմյան

«ԴԵՐԺԱՎԱ-Ս» DERJAVA-S 02500028

22 սեպտեմբեր, 2022թ.

Գլխավոր հաշվապահ

Ռաֆաել Ավետիսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծան.	2021թ.	2020թ.
Հասույթ	17	14,907,332	12,920,788
Վաճառքի ինքնարժեք	18	(10,790,129)	(9,371,643)
Համախառն շահույթ		**4,117,203**	**3,549,145**
Իրացման ծախսեր	19	(1,946,352)	(1,549,523)
Վարչական ծախսեր	21	(536,093)	(486,764)
Գործառնական այլ եկամուտներ	20	182,759	229,047
Գործառնական այլ ծախսեր		(26,788)	-
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր		(13,515)	(31,952)
Ֆինանսական ծախսեր	22	(470,233)	(509,138)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		930,629	(1,188,358)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**2,237,610**	**12,457**
Շահութահարկի գծով ծախս	23	(261,787)	(217,512)
Շահույթ (վնաս) տարվա համար		**1,975,823**	**(205,055)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**1,975,823**	**(205,055)**

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

«ԴԵՐԺԱՎԱ-Ս»
«DERJAVA-S»
«ДЕРЖАВА-С»
02500028

Ստանիսլավ Հովակիմյան

22 սեպտեմբեր, 2022թ.

Ռաֆաել Ավետիսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրա-կան կապիտալ	Չբաշխված շահույթ	Պահուստային կապիտալ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2020թ.	488,415	3,843,292	89,509	4,421,216
Տարվա շահույթ	-	(205,055)	-	(205,055)
Շահաբաժինների հայտարարում	-	(551,000)	-	(551,000)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	488,415	3,087,237	89,509	3,665,161
Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.	488,415	3,087,237	89,509	3,665,161
Կանոնադրական կապիտալի համալրում	25,000	-	-	25,000
Տարվա շահույթ	-	1,975,823	-	1,975,823
Շահաբաժինների հայտարարում	-	(1,424,968)	-	(1,424,968)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	513,415	3,638,092	89,509	4,241,016

Գլխավոր տնօրեն

Ստանիսլավ Հովակիմյան

22 սեպտեմբեր, 2022թ.

Գլխավոր հաշվապահ

Ռաֆաել Ավետիսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

էջ 8՝ 35-ից

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Հաճախորդներից ստացված մուտքեր	21,457,115	14,486,752
Այլ եկամուտ	253,264	162,229
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(12,366,421)	(10,518,672)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(1,114,772)	(1,207,632)
Վճարված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(2,501,655)	(1,965,980)
Վճարված շահութահարկ	(239,814)	(208,428)
Այլ վճարումներ	(199,121)	(169,486)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**5,288,596**	**578,783**
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր	(288,508)	(154,576)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	81,683
Տրամադրված փոխառություններ	(3,389,211)	(274,077)
Տրամադրված փոխառությունների մարում	1,454,304	1,515,720
Ստացված տոկոսներ	204,510	101,998
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(2,018,905)**	**1,270,748**
Ֆինանսավորման գործունեությունից հոսքեր		
Կանոնադրական կապիտալի համալրում	25,000	-
Ստացված վարկեր	5,801,125	5,414,339
Ստացված վարկերի մարում	(6,047,956)	(5,904,539)
Ստացված փոխառություններ	1,747,754	1,862,992
Ստացված փոխառությունների մարում	(2,494,957)	(1,653,061)
Շահաբաժինների վճարումից ելքեր	(1,424,968)	(551,000)
Վարձակալության գծով պարտավորության մարումից ելքեր	(411,734)	(570,182)
Վարձակալության գծով տոկոսների վճարումից ելքեր	(38,033)	(68,108)
Վճարված տոկոսներ վարկերի և փոխառությունների գծով	(392,596)	(391,097)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(3,236,365)**	**(1,860,656)**
Ընդամենը դրամական զուտ հոսքեր	**33,326**	**(11,125)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(1,322)	(752)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**33,056**	**44,933**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**65,060**	**33,056**

Գլխավոր տնօրեն / Գլխավոր հաշվապահ

Ստանիսլավ Հովակիմյան 22 մեկնաբերի 2022թ. Դավիթ Ավետիսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

էջ 9՝ 35-ից

2021թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

ա) Ընկերության նկարագիրը և գործունեությունը

«Դերժավա-Ս» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություն է:

Ընկերությունը ստեղծվել է 1995թ. հունիսի 17-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Ընկերության անվանումը՝	*«Դերժավա-Ս» Փակ Բաժնետիրական Ընկերություն*
Գրանցման համարը՝	*286.120.01411*
Գրանցման վկայականը՝	*01Ա-014396*
Գրանցման ամսաթիվը՝	*17.06.1995թ.*
Գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝	*ՀՀ, ք. Երևան, Հաղթանակ թաղամաս (4-րդ գյուղ), 1-ին փողոց, 1/1 շինություն*
Իրավաբանական գրանցման հասցեն՝	*ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 15շ., բն. 16*
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	*02500028*

Ընկերությունը հիմնականում զբաղվում է ապրանքների մանրամեծածախ առևտրով:

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ աշխատակիցների ցուցակային թվաքանակը եղել է 336 հոգի (31 դեկտեմբերի 2020թ.՝ 343 հոգի):

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 513,415,100 (Հինգ հարյուր տասներեք միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է 170 հասարակ անվանական բաժնետոմս, իսկ մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 3,020,088.82 (երեք միլիոն քսան հազար ութսունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) ՀՀ դրամ է: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

Բաժնետերեր	*Բաժնետոմսերի տեսակարար կշիռը (%)*
Ստանիսլավ Հովակիմյան	76.4706
Արկադի Համբարձումյան	23.5294
Ընդամենը	**100.0%**

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան:

2.2. Չափման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով,

բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

2.3. Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

<< ազգային արժույթը << դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. սեպտեմբեր 22-ին Ընկերության գլխավոր տնօրեն Ստանիսլավ Հովակիմյանի և Ընկերության գլխավոր հաշվապահի Ռաֆաել Ավետիսյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Գնորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում մասնակիցների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Ընկերությունը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակի ինչ որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Ընկերության սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման պահերը նկարագրված են Ծանոթ. 17-ում:

Այնքանով, որքանով Ընկերության կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Ընկերությունը ճանաչում է «պայմանագրի գծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

3.2. Մատակարարներից ստացված զեղչեր

Ընկերությունը ստանում է կուտակային զեղչեր մատակարարներից: Մատակարարներից ստացված բոլոր զեղչերն Ընկերության կողմից դիտարկվում են գնման ծավալի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ մատակարարներն ուղղակիորեն փոխհատուցում են առանձին ծախսեր: Մատակարարները տրամադրում են կուտակային զեղչեր գնումների որոշակի ծավալի շեմը գերազանցելու համար՝ հետընթաց (ռետրոսպեկտիվ) ազդեցությամբ: Ընկերության կողմից դրանք հաշվառվում են որպես հաշվապահական գնահատական և ճանաչվում են, երբ Ընկերությունը համոզված է, որ համապատասխան գնումների շեմը կհաղթահարվի, և դիտվում են որպես պաշարների ինքնարժեքի նվազեցում: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արդեն վաճառված ապրանքների գծով ստացված ռետրոսպեկտիվ զեղչերը դիտվում են որպես վաճառքի ինքնարժեքի ճշտում: Մատակարարներից ստացված ծախսերի գծով այլ փոխհատուցումները հաշվառվում են որպես այլ եկամուտ:

3.3. Վարձակալություն. Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը, որպես վարձակալ, ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

2021 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ա) բոլոր կարճաժամկետ (12 ամիսը չգերազանցող ժամկետով) վարձակալությունների (ներառյալ այն վարձակալությունները, որոնց մնացորդային ժամկետը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 12 ամիսը) և

բ) բոլոր այն վարձակալությունների, որոնց դեպքում վարձակալության առարկա ակտիվը փոքրարժեք է (այսինքն՝ դրա արժեքը նոր վիճակում չի գերազանցում 2,5 միլիոն դրամը):

Վերը «ա» և «բ» ենթակետերում նշված վարձակալությունների գծով վարձակալական վճարները ճանաչվում են ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մեկնարկի ամսաթվին վարձակալության գծով պարտավորությունը չափվում է այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքի կիրառմամբ, եթե այդ դրույքը հեշտությամբ որոշելի է: Հակառակ դեպքում՝ կիրառվում է վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները բաղկացած են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարումներից, որոնք մեկնարկի ամսաթվին դեռևս վճարված չեն.

ա) հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսում,

բ) վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից,

գ) գումարները, որոնք ակնկալվում է վճարել վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,

դ) գնման ընտրանքի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ ընտրանքը, և

ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու ընտրանքի իրագործումը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական արժեքի մեջ ներառվում են՝

ա) վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը, ինչպես նկարագրված է ստորև,

բ) վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,

գ) վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով՝

ա) հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և

բ) ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ (մասնավորապես՝ վարձակալության ժամկետի կամ փոփոխուն վարձավճարների վերանայման դեպքում):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է սեփական հիմնական միջոցների հաշվառմանը համանման կերպով: Ընդ որում, եթե ակնկալվում է, որ վարձակալության հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին կամ ընթացքում կփոխանցվի Ընկերությանը, ապա օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ավարտը: Հակառակ դեպքում՝ մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալության գծով պարտավորությունը չափվում է՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վերանայումները կամ վարձակալության վերափոխումները:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ չներառված վարձակալության փոփոխուն վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ պայմանը:

3.4. <u>Շահութահարկ</u>

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը բիզնեսի միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը բիզնեսի միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ

ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) բիզնեսի միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.5. Հիմնական միջոցներ և այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռա-

յին արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

○ Շենքեր	20-75 տարի
○ Սարքավորումներ	3-20 տարի
○ Տրանսպորտային միջոցներ	3-10 տարի
○ Արտադրատնտեսական գույք	1-10 տարի

Վարձակալված շենքերի վրա կատարված կապիտալ ծախսումներն ամորտիզացվում են վարձակալության գնահատված ժամկետներում:

3.6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.7. Արտարժութային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.8. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած մշակումն ավարտելու գնահատված ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը: Մատակարարների կողմից տրամադրվող զեղչերը (ներառյալ ծավալային զեղչերը, այդ թվում՝ ռետրոսպեկտիվ տրամադրվող) դիտվում են որպես պաշարների ինքնարժեքի նվազեցում:

3.9. Ֆինանսական գործիքներ

(i) Սկզբնական ճանաչումը և չափումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները:

(ii) Ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը), կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Հետագա չափումը

Ընկերությունը, բացի դրամական միջոցներից, դեբիտորական և կրեդիտորական պարտքերից, այլ ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ չունի: Սկզբնական ճանաչումից հետո դրանք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, իսկ առավել հաճախ, երբ դրանք կարճաժամկետ են, չափվում են անվանական գումարով:

3.10. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.11. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.12. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. Աշխատավարձը,
b. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
c. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս)

այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցը մատուցում է ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որը Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. <u>*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը*</u>

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. <u>*Ակտիվների արժեզրկումը*</u>

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա:

4.3. Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Ընկերության անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով իրավասու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

4.4. Վարձակալություն

Իրականացվել են պատշաճ դատողություններ և գնահատումներ, որոնք անհրաժեշտ են 2019թ. հունվարի 1-ից «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ի պահանջներին համապատասխան վարձակալությունները հաշվառելու և ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու համար, մասնավորապես՝ վարձակալություններ ժամկետները գնահատելու (կապված ժամկետների երկարացման կամ վաղաժամ դադարեցման հավանականությունների հետ) և վարձակալական վճարները զեղչելու համար Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատման առումով: Լավագույն գնահատումների և դատողությունների համապատասխան էլ ճանաչվել և բացահայտվել են գումարները ֆինանսական հաշվետվություններում: Ընկերությունը վարձակալական վճարները զեղչելու համար կիրառել է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի 10% դրույքաչափ և գնահատել է, որ վարձակալության պայմանագրերի ժամկետի ավարտից հետո չի շարունակելու վարձակալությունը:

4.5. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Ընկերությունը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Ընկերությունը պարբերաբար հետևում է հոգաբարձուների խորհրդի անդամների նշանակալի մասնակցությանն այլ կազմակերպությունների կապիտալում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուրի հետ գործարքի ծավալները:

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1. Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

2021 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած և Ընկերության կողմից կիրառված նոր կամ փոփոխված ստանդարտներ չկան:

5.2. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Հրապարակված, սակայն սույն ֆինանսական հաշվետվություններով ծածկվող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք Ընկերության կանխատեսումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Ընկերությունը մտադիր է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- *«Պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը. փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում»* (հրապարակվել է 2020թ. հունվարի 20-ին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Սրանով հստակեցվել են անորոշ մարման (կատարման) ժամկետ

ունեցող պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման հետ կապված հարցեր: Չի ակնկալվում, որ ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանզի հստակեցված մոտեցումը համընկնում է Ընկերությունում կիրառվողի հետ:

- *«Հիմնական միջոցներ. մուտքեր նախքան նպատակային օգտագործումը» Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում* (հրապարակվել է 2020թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխություններով արգելվում է հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն մուտքերը, որոնք ստացվում են հիմնական միջոցի միավորը ղեկավարության մտադրություններին համապատասխան օգտագործվելու համար անհրաժեշտ վիճակի և վայր բերելու ընթացքում արտադրված արդյունքի վաճառքից: Այդ մուտքերը և դրանց հետ կապված ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Փոփոխություններով նաև հստակեցվում է, թե ինչ է նշանակում «ստուգել, թե արդյոք ակտիվն աշխատում է պատշաճորեն», այն է՝ «գնահատել, թե արդյոք ակտիվի տեխնիկական և ֆիզիկական կատարողականն այնպիսին է, որ այն կարող է օգտագործվել արտադրությունում կամ ապրանքների առաքման, կամ ծառայությունների մատուցման մեջ, կամ այլոց վարձով տալու համար, կամ վարչական նպատակներով:

  Փոփոխությունները կիրառվում են հետընթաց, բայց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք նպատակային օգտագործման համար պատրաստ են դարձել ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Սկզբնական կիրառման կուտակային ազդեցությունը պետք է ճանաչվի որպես չբաշխված շահույթի (կամ սեփական կապիտալի այլ համապատասխան հոդվածի) սկզբնական մնացորդի ճշգրտում ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ:

- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը» Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում* (հրապարակվել է 2021թ. փետրվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխություններով «Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների» սահմանումը փոխարինվում է «Հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումով: Փոփոխություններով նաև հստակեցվում է, թե ինչպես զանազանել հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունը հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից:

  Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունները, էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ. 2018-2020թթ. ցիկլ»* (հրապարակվել է 2020թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխություններ են կատարվել հետևյալ ստանդարտներում.
  - *«Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9,*
  - *«Վարձակալություն» ՖՀՄՍ 16,*
  - *«Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41,*
  - *«ՖՀՄՍ-ների առաջին անգամվա որդեգրումը» ՖՀՄՍ 1:*

  Փոփոխությունը ենթակա է կիրառման առաջընթաց, այն է՝ Ընկերության կողմից իրական արժեքի չափման նպատակով փոփոխության առաջին անգամ կիրառման պահից սկսած:

  Փոփոխությունը կիրառելի է 2022 թվականի հունվարի 1-ից սկսվող տարվա համար: Թույլատրելի է վաղաժամ կիրառումը:

  Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխություններն էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Վարձակալության գծով պարտավորությունը «Վաճառք և հետադարձ վարձակալություն» գործարքում» Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում* (հրապարակվել է 2022թ. սեպտեմբերին) պարտադիր կիրառման

ենթակա է 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է՝ պայմանով, որ դա բացահայտվի: Այս փոփոխություններով պահանջվում է, որ վաճառող-վարձակալը հետադարձ վարձակալությունից առաջացող վարձակալության գծով պարտավորությունը չափի այնպես, որպեսզի հնարավոր չլինի ճանաչել վաճառքից օգուտ կամ կորուստ՝ պահպանված օգտագործման իրավունքի գծով: Առանց այս փոփոխությունների այդպիսի օգուտների կամ կորուստների ճանաչումը կարող է տեղի ունենար վարձակալության գծով պարտավորությունների հետագա վերաչափման դեպքում:

Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխություններ էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա, քանզի Ընկերությունը մինչ այս պահը չունի «Վաճառք և հետադարձ վարձակալություն» գործարքներ:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք և կահույք	Մեքենաներ և սարքավորումներ	Հողամասեր	Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք							
Մնացորդ առ 01.01.2020թ.	3,279,082	1,537,839	418,708	194,730	581,874	40,790	6,053,023
Ավելացում	-	927,690	140,868	1,322	-	-	1,069,880
Նվազում	-	(173,590)	-	-	-	-	(173,590)
Մնացորդ առ 31.12.2020թ.	3,279,082	2,291,939	559,576	196,052	581,874	40,790	6,949,313
Ավելացում	-	142,636	279,205	-	-	-	421,841
Նվազում	-	-	(38,865)	-	-	-	(38,865)
Մնացորդ առ 31.12.2021թ.	3,279,082	2,434,575	799,916	196,052	581,874	40,790	7,332,289
Մաշվածություն							
Մնացորդ առ 01.01.2020թ.	381,615	859,074	148,950	148,088	-	36,837	1,574,564
Տարվա մաշվածություն	53,681	215,124	44,731	4,480	-	-	318,016
Նվազում	-	(40,579)		-	-	-	(40,579)
Մնացորդ առ 31.12.2020թ.	435,296	1,033,619	193,681	152,568	-	36,837	1,852,001
Տարվա մաշվածություն	52,802	192,554	169,680	3,650	-	-	418,686
Նվազում	-	-	(35,241)	-	-	-	(35,241)
Մնացորդ առ 31.12.2021թ.	488,098	1,226,173	328,120	156,218	-	36,837	2,235,446
Հաշվեկշռային արժեք							
Առ 01.01.2020թ.	**2,897,467**	**678,675**	**269,758**	**46,642**	**581,874**	**3,953**	**4,478,459**
Առ 31.12.2020թ.	**2,843,786**	**1,258,320**	**365,895**	**43,484**	**581,874**	**3,953**	**5,097,312**
Առ 31.12.2021թ.	**2,790,984**	**1,208,402**	**471,796**	**39,834**	**581,874**	**3,953**	**5,096,843**

2021թ. ընթացքում Ընկերությունը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի հիմնական միջոցների ձեռքբերման որևէ պայմանագրային հանձնառություն:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականությամբ պատկանող շենքերը գրավադրված են՝ որպես բանկային վարկերի ապահովություն:

1,006,096 հազար ՀՀ դրամ սկզբնական արժեքով տրանսպորտային միջոցներ ձեռք են բերվել լիզինգով, որոնց սեփականության իրավունքն ընկերությանը դեռևս չի փոխանցվել: Լիզինգի ներքո պահվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է՝ 795,839 հազ. դրամ:

7. Վարձակալություն

Ընկերությունն ունի վարձակալված շենքային տարածքներ՝ երեք պայմանագրով: Վարձակալություններից մեկի ժամկետը մինչև 2024 թվականի օգոստոսի 15-ն է, իսկ մյուս երկուսինը՝ մինչև 2022 թվականի ավարտը:

Վարձակալությանը վերաբերող հաշվեկշռային արժեքները հետևյալն են.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Սկզբնական արժեք	344,710	344,710
Մաշվածություն	(211,227)	(133,364)
	133,483	**211,346**

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ին	211,346	290,350
Ավելացում տարվա ընթացքում	-	-
Մաշվածություն	(77,863)	(79,004)
Հաշվեկշռային արժեքը դեկտեմբերի 31-ին	**133,483**	**211,346**

Ստորև ներկայացված են շենքերի վարձակալության գծով պարտավորություններն ըստ մարման ժամկետների.

	Վարձակալության գծով պարտավորություններ		Վարձակալության գծով պարտավորությունների ներկա արժեք	
Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.	31.12.2021թ.	31.12.2020թ.
Մինչև մեկ տարի	88,025	97,391	77,240	78,826
1-ից 5 տարի	84,540	172,565	78,183	155,423
5 տարուց ավելի	-	-	-	-
	172,565	**269,956**	**155,423**	**234,249**
Հանած՝				
Դեռ չկրած ֆինանսական ծախսեր	(17,142)	(35,707)		
	155,422	**234,249**		

Վարձակալության գծով պարտավորությունների զեղչման նպատակով կիրառված վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը 10% է:

Ընկերությունն ունի նաև լիզինգով ձեռքբերված տրանսպորտային միջոցներ, որոնց գծով սեփականության իրավունքը դեռևս փոխանցված չէ: Տրանսպորտային միջոցների լիզինգից առաջացող օգտագործման իրավունքի ձևով ակտիվները շարունակում են հաշվառվել հիմնական միջոցների կազմում՝ տրանսպորտային միջոցներ խմբում (տես ծանոթ. 6), այլ ոչ թե արտացոլվում են առանձին տողով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ինչպես դա արվում է շենքերի սովորական վարձակալությունից առաջացող օգտագործման իրավունքի ձևով ակտիվների համար:

Ստորև ներկայացված են տրանսպորտային միջոցների լիզինգի գծով պարտավորություններն՝ ըստ

մարման ժամկետների.

Հազար դրամ	Լիզինգի գծով պարտավորություններ		Լիզինգի գծով պարտավորությունների ներկա արժեք	
	31.12.2021թ.	**31.12.2020թ.**	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Մինչև մեկ տարի	262,817	412,300	252,156	390,076
1-ից 5 տարի	318,813	511,191	301,456	479,792
5 տարուց ավելի	-	-	-	-
	581,630	**923,491**	**553,602**	**869,868**
Հանած դեռ չկրած ֆինանսական ծախսեր՝	(28,027)	(53,623)		
	553,602	**869,868**		

Ներառված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝

Հազար դրամ

	31.12.2021թ.	**31.12.2020թ.**
- Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս	329,386	468,902
- Վարձակալության գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մաս	379,639	635,215
	709,025	**1,104,117**

Վարձակալությանը վերաբերող՝ շահույթում կամ վնասում ճանաչված գումարները հետևյալն են.

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախս (ներառված է ֆինանսական ծախսերում)	38,033	63,656
Տարվա մաշվածություն վարձակալված շենքերից առաջացող օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով (ներառված է իրացման ծախսերում (Ծանոթ. 19)	77,863	79,004
Տարվա մաշվածություն լիզինգով ստացված տրանսպորտային միջոցների գծով (ներառված է իրացման ծախսերում (Ծանոթ. 19)	68,066	96,062
Տարվա մաշվածություն լիզինգով ստացված տրանսպորտային միջոցների գծով (ներառված է ինքնարժեքում (Ծանոթ.18)	59,748	58,947
Կարճաժամկետ վարձակալությունների գծով ծախսեր (ներառված է իրացման ծախսերում (Ծանոթ. 19)	83,741	75,513
Փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով ծախսեր	-	-
Փոփոխական վարձավճարների գծով ծախսեր, որոնք չեն ներառվել վարձակալության գծով պարտավորության չափման մեջ	-	-
	327,451	**373,182**

Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը հետևյալն են.

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը		608,106

8. Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Կարճաժամկետ փոխառություններ ՀՀ դրամով	1,549,015	753,832
Կարճաժամկետ փոխառություններ Եվրոյով	445	3,454
Կարճաժամկետ փոխառություններ Դոլարով	1,149,976	8,504
Տոկոսներ կարճաժամկետ փոխառությունների գծով	179,509	267,525
	2,878,944	**1,033,315**

Փոխառությունները իրենցից ներկայացնում են կապակցված կողմերին մինչև մեկ տարի ժամկետով տրամադրված, 7.507% անվանական տոկոսադրույքով, չապահովված փոխառություններ, որոնք հաշվառվում են արդյունքային տոկոսադրույքի մեթոդով՝ ամորտիզացված արժեքով:

Տրամադրված երկարաժամկետ փոխառությունների հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

9. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

9.1. Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշված հոդվածների հետ.

Հազար դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	31.12.21	31.12.20	31.12.21	31.12.20	31.12.21	31.12.20
Հիմնական միջոցներ	-	-	(294,470)	(298,712)	(294,470)	(298,712)
Օգտագործման իրավունքի ձևով (ՕԻՁ) ակտիվ	-	-	(24,027)	(38,042)	(24,027)	(38,042)
Վարձակալության գծով պարտավորություն	27,976	42,165	-	-	27,976	42,165
Ընթացիկ պահուստներ	6,387	7,520	-	-	6,387	7,520
Զուտ հարկային ակտիվ (պարտավորություն)	**34,363**	**49,685**	**(318,497)**	**(336,754)**	**(284,134)**	**(287,069)**

9.2. Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում

Հազար դրամ	01.01.20թ.	2020թ. ճանաչված շահույթում կամ վնասում	31.12.20թ.
Հիմնական միջոցներ	(311,060)	12,348	(298,712)
ՕԻՁ ակտիվ	(52,263)	14,221	(38,042)
Վարձակալության գծով պարտավորություն	54,050	(11,885)	42,165
Ընթացիկ պահուստներ	4,839	2,681	7,520
	(304,434)	**17,365**	**(287,069)**

Հազար դրամ	01.01.21թ.	2021թ. ճանաչված շահույթում կամ վնասում	31.12.21թ.
Հիմնական միջոցներ	(298,712)	4,242	(294,470)
ՕԻՁ ակտիվ	(38,042)	14,015	(24,027)
Վարձակալության գծով պարտավորություն	42,165	(14,189)	27,976
Ընթացիկ պահուստներ	7,520	(1,133)	6,387
	(287,069)	**2,935**	**(284,134)**

10. Պաշարներ

Հազար դրամ	Առ 31.12.2021թ.	Առ 31.12.2020թ.
Ապրանքներ	1,096,938	1,232,803
Վառելիք	11,687	4,692
Ընդամենը	**1,108,625**	**1,237,495**

Հաշվետու տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմել է 11,065,899 հազար դրամ (2020թ.՝ 9,610,625 հազար դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում գրավադրվել են Ընկերությանը և իրեն կապակցված երկու այլ ընկերությունների պատկանող պաշարները՝ 2,400 միլիոն << դրամ ընդհանուր արժողությամբ՝ որպես ընկերությունների խմբի կողմից համապարտ պարտավորությամբ ստանձնած վարկային պարտավորությունների ապահովություն:

11. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	Առ 31.12.2021թ.	Առ 31.12.2020թ.
Վաճառված ապրանքների գծով	3,160,499	6,791,114
Վարձակալության գծով	25,641	40,235
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(4,754)	(10,247)
Հարկերի և այլ վճարների գծով	4,000	7,726
Ընդամենը	**3,185,386**	**6,828,828**

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

12. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

12.1. Դրամական միջոցների մնացորդներ

Հազար դրամ	Առ 31.12.2021թ.	Առ 31.12.2020թ.
Բանկային հաշիվներ՝ << դրամով	24,582	9,081
Դրամարկղ՝ << դրամով	23,528	6,001
Դրամական միջոցներ ճանապարհին	16,950	27,055
	65,060	**42,137**

Նշված ամսաթվերի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

12.2. Ոչ դրամային գործարքներ

Կատարվել են ներդրումային կամ ֆինանսավորման գործունեությանը վերաբերող հետևյալ ոչ դրամային գործարքները.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) հիմնական միջոցների ձեռքբերում	133,333	915,019
Ընդամենը	**133,333**	**915,019**

12.3. Ֆինանսական պարտավորությունների շարժի և ֆինանսավորման գործունեությունից հոսքերի համադրում

Հազար դրամ	Օվերդրաֆթ	Ստացված վարկեր	Ստացված փոխառություններ	Վարձակալություն
Սկզբնական մնացորդ առ 01 հունվարի	**358,634**	**7,546,641**	**883,972**	**1,104,117**
Վարկերի/փոխառությունների ստացում	16,577,749	5,092,966	1,747,754	
Պարտավորությունների մարում դրամական վճարումով	(15,878,671)	(6,047,956)	(2,494,956)	(410,971)
Փոխառությունների ստացում պարտավորության մարմամբ			1,821	
Լիզինգի կնքում				133,333
Վարձակալական պարտավորություն-ների ներում՝ Covid 19-ով պայմանավորված				(8,640)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը		(851,817)	(12,063)	(108,814)
Հաշվեգրված տոկոսներ	66,980	346,133	19,087	38,032
Վճարված տոկոսներ	(66,980)	(298,919)	(26,695)	(38,032)
Covid-19 համավարակով պայմանա-վորված պետական աջակցության ծրագրի շրջանակում ստացված վարկի տոկոսի սուբսիդավորում		(27,355)		
Վերջնական մնացորդ առ 01 դեկտեմբերի	**1,057,713**	**5,759,693**	**118,919**	**709,025**

13. Երկարաժամկետ վարկեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Բանկային վարկ՝ Եվրոյով, մինչև 06/06/2022թ. մարման ժամկետով, տարեկան 2,5% EURIBOR տոկոսադրույքով	2,552,052	3,013,217
Բանկային վարկ՝ Եվրոյով, մինչև 03/09/2026թ. մարման ժամկետով, տարեկան 5,75% տոկոսադրույքով	500,871	743,798
Բանկային վարկ՝ Եվրոյով, մինչև 13/02/2023թ. մարման ժամկետով, տարեկան 3,4% EURIBOR տոկոսադրույքով	-	172,930
Բանկային վարկ՝ << դրամով, մինչև 05/05/2022թ. մարման ժամկետով, տարեկան 11,4% տոկոսադրույքով	-	104,167
Ընդամենը	**3,052,923**	**4,034,112**

Երկարաժամկետ վարկերի հետ կապված արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

14. Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Բանկային վարկ՝ Դոլարով, մինչև 09/2023թ., տարեկան 7% -ով	2,317,489	2,935,426
Օվերդրաֆտ՝ << դրամով, մինչև 09/2023թ., տարեկան 11%-ով	64,384	358,634
Օվերդրաֆտ՝ << դրամով, մինչև 06/2022թ., տարեկան 8,5%-ով	993,329	-
Բանկային վարկ՝ << դրամով, մինչև 05/2022թ., տարեկան 11,4%-ով	104,167	250,000

Բանկային վարկ՝ Եվրոյով, մինչև 02/2023թ., տարեկան 3,4% EURIBOR	144,818	168,341
Բանկային վարկ՝ Եվրոյով, մինչև 09/2026թ., 5,75%-ով	125,218	143,893
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ << դրամով, անտոկոս	-	546,500
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ << դրամով, 7,507%-ով	1,487	189,990
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ դոլարով, անտոկոս	74,853	61,466
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ դոլարով, 7,507%-ով	98	-
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ եվրոյով, անտոկոս	-	40,006
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ եվրոյով, 7,507%-ով	21,704	-
Կարճաժամկետ փոխառություն կապակցված կողմից՝ ռուբլիով, 7,507%-ով	-	17,625
Տոկոսներ կարճաժամկետ փոխառությունների գծով	20,777	28,386
Տոկոսներ բանկային վարկերի գծով	15,078	14,870
Ընդամենը	**3,883,402**	**4,755,137**

Բանկային վարկերը ապահովված են հիմնադիրների և այլ կապակցված կողմերի երաշխավորություններով:

Կարճաժամկետ վարկերի և փոխառությունների հետ կապված արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

15. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2021թ.	31.12.2020թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	161,567	295,679
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	5,807	35,674
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ	340,277	292,370
Այլ կրեդիտորական պարատավորություն	38,848	16,386
	546,499	**640,109**

Առևտրական կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

16. Ընթացիկ պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով անձնակազմի գծով ծախսումները: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Հեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

17. Հասույթ

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը ներառում է ապրանքների վաճառքը և շենքային տարածքները գործառնական վարձակալությամբ տրամադրելը:

Կատարման ենթակա պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է գնորդների հետ պայմանագրերում նշված հատուցումների հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ գնորդին է փոխանցում ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով կատարողական պարտականությունների բնույթի և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Հասույթ բերող գործունեության ուղղությունը	Կատարողական պարտականությունը (ԿՊ)	ԿՊ-ի բավարարման ուղղությամբ առաջընթացի չափման մեթոդը	Հասույթի ճանաչման պահը
Ապրանքների վաճառք	Ապրանքների տրամադրում գնորդին	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է

Հասույթն ըստ ծառայության տեսակների

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ապրանքների վաճառքից	14,712,586	12,770,803
Տրված վարձակալությունից	194,746	149,985
Ընդամենը	**14,907,332**	**12,920,788**

Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով ստացվելիք գումարների և պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ:

Հազար դրամ	Ծանոթ.	31.12.2021թ.	31.12.2020թ.
Վաճառքների գծով դեբիտորական պարտքերում ներառված ստացվելիք գումարներ	11	3,160,499	6,791,114
Գնորդների հետ պայմանագրերի գծով ակտիվ՝ դեբիտորական պարտքերում չներառված		-	-
Պայմանագրային պարտավորություններ		-	-

18. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ապրանքների վաճառքից	10,440,611	9,145,220
Փչացած ապրանքների դուրսգրում	241,111	105,706
Վարձակալությամբ տրված շենքերի և տրանսպորտային միջոցների մաշվածություն	108,407	120,717
Ընդամենը	**10,790,129**	**9,371,643**

19. Իրացման ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ	828,650	807,493
Մաշվածություն և ամորտիզացիա	288,280	235,904
Վառելիք	225,066	177,709
Գովազդային պարագաներ	359,298	134,907
Տրանսպորտի վարձակալություն	62,702	60,713
ՀՄ վերանորոգում	50,000	-
Ավտոպահեստամասեր	49,860	47,083
Մարքեթինգային ծախսեր	37,141	30,027
Տարածքի վարձակալություն	21,039	14,800
Այլ ծախսեր	24,316	40,887
Ընդամենը	**1,946,352**	**1,549,523**

20. Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտ	116,648	125,450
Վարձակալական պարտավորությունների ներում՝ Covid 19-ով պայմանավորված	8,640	35,766
Covid-19 համավարակով պայմանավորված պետական աջակցության ծրագրի շրջանակում ստացված վարկի տոկոսի սուբսիդավորում	27,355	32,111
Անհատույց ստացված ակտիվների գծով ճանաչված եկամուտ	201	26,747
Նյութական վնասի փոխհատուցումից ճանաչված եկամուտ	7,894	3,099
ՀՄ վաճառքից եկամուտ	13,305	-
Այլ	8,716	5,874
Ընդամենը	**182,759**	**229,047**

21. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	239,104	217,181
Խորհրդատվական ծախսեր	20,368	18,450
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	102,139	47,393
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	15,509	19,402
Գրասենյակային, կոմունալ և այլ ծառայություններ	29,425	28,228
Բանկային և ապահովագրական ծախսեր	30,134	44,398
Արտարժույթի փոխարկման ծախսեր	77,639	79,928
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	16,281	18,612
Այլ ծախսեր	5,494	13,172
Ընդամենը	**536,093**	**486,764**

22. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Վարկերի գծով	413,113	418,787
Վարձակալության գծով	38,033	63,656
Փոխառությունների գծով	19,087	26,695
Ընդամենը	**470,233**	**509,138**

23. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	264,722	234,877
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ (Ծանոթ. 9)	(2,935)	(17,365)
	261,787	**217,512**

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18% է (2020թ.՝ 18%):

Շահութահարկի փաստացի (արդյունքային) փոկոսադրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	2021թ.		2020թ.	
Շահույթ՝ նախքան հարկումը	2,244,951		12,457	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքաչափով	404,091	18%	2,242	18%
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը	(167,513)	(7)%	213,904	1,717%
Զուտ այլ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	25,209	1%	1,366	11%
Ընդամենը՝	**261,787**	11.66%	**217,512**	1,746%

24. Կապակցված կողմերի հետ գործարքներ

24.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը որևէ կազմակերպության կողմից չի վերահսկվում: Ընկերության բաժնետերերը ֆիզիկական անձինք են, որոնց կազմը ներկայացված է Ծանոթ. 1-ում:

24.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	26,885	21,948

24.3. Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Գործարքի գումար 2021թ.	Գործարքի գումար 2020թ.	Չմարված մնացորդ 2021թ.	Չմարված մնացորդ 2020թ.
Ընկերության բաժնետերերի հետ՝				
Ստացված փոխառություններ	365,080	453,721	36,188	452,421
Վճարված շահաբաժիններ	1,424,968	551,000	-	-
Այլ կապակցված կողմերի հետ՝				
Ապրանքի վաճառք	52,833	17,094	2,860	264,805
Կրեդիտորական պարտքեր ապրանքների և ծառայությունների դիմաց	1,108,329	951,118	67,041	136,555
Ստացված կանխավճար	45,214	-	4,214	-
Տրված կանխավճար	4,400	3,233	-	-
Տրված վարձակալություն	194,820	161,840	20,626	21,986
Ստացված վարձակալություն	26,939	17,721	3,907	2,953
Ստացված փոխառություններ	1,396,123	1,440,974	61,954	403,165
Ստացված փոխառությունների տոկոս	19,087	26,696	20,777	28,386
Տրամադրված փոխառություններ	3,390,432	300,611	2,699,435	765,790
Տրամադրված երաշխավորություններ	-	-	1,852,218	2,112,916
Ստացված երաշխավորություններ	-	-	3,372,328	3,290,555

25. Ֆինանսական ռիսկերի կառավարման ուղղությունները

25.1. Ընդհանուր ակնարկ

Ընկերությունը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Ընկերության ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Ընկերության նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարության և ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Ընկերությունը վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

25.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտակա-նությունների չկատարմամբ Ընկերության համար կառաջացնի ֆինանսական կորուստ:

Ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2021թ.	31.12.2020թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթ. 11)	3,181,386	6,821,102
Տրամադրված երաշխավորություններ (Ծանոթ.27.4)	1,852,218	2,112,916
Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ (Ծանոթ. 8)	2,878,944	1,033,315
Դրամական միջոցներ (Ծանոթ. 12)	41,532	36,136
	7,954,080	**10,003,469**

25.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

31 դեկտ. 2021թ.		Պայմանագրային դրամական հոսքեր						
հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	> 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	6,936,325	6,936,325	1,132,566	35,855	2,714,981	2,552,052	500,871	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	206,222	206,222	-	147,431	-	58,791	-	-
	7,142,547	**7,142,547**	**1,132,566**	**183,286**	**2,714,981**	**2,610,843**	**500,871**	**-**

31 դեկտ. 2020թ. հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր						
		Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	> 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	8,789,250	8,789,250	358,634	14,870	4,381,634	3,117,384	172,930	743,798
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	640,109	640,109	131,683	335,339	173,087	-	-	-
	9,429,359	**9,429,359**	**490,317**	**350,209**	**4,554,721**	**3,117,384**	**172,930**	**743,798**

Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

25.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, կազդեն Ընկերության շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժութային ռիսկ

Ընկերությունն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժութային ռիսկին ենթարկվածությունները Ընկերությունը չի կառավարում:

Ընկերության արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝ արտահայտված համապատասխան արժույթներով.

Հազար դրամ	31.12.2021թ.			31.12.2020թ.		
Ֆինանսական ակտիվ (պարտավորություն)	EUR	USD	RUB	EUR	USD	RUB
Տրված փոխառություններ	445	13,967	-	3,454	8,504	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	(115,666)	-
Վարձակալության գծով պարտավորություններ	(496,023)	-	-	(774,565)	(50,593)	-
Ստացված վարկեր	(3,328,859)	(2,317,489)	-	(4,254,427)	(2,935,426)	-
Ստացված փոխառություններ	(21,704)	(74,950)	-	(40,006)	(61,466)	(17,625)
Արտարժույթային զուտ ենթարկվածություն	**(3,846,141)**	**(2,378,472)**	**-**	**(5,065,544)**	**(3,154,647)**	**(17,625)**

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակած արժութային շուկաներում ձևավորած միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

Դրամով	Միջին փոխարժեքներ 2021թ.	2020թ.	Հաշվետու ամսաթվի փոխարժեք 31.12.2021թ.	31.12.2020թ.
1 Եվրո	596.65	558.39	542.61	641.11
1 ԱՄՆ Դոլար	503.81	489.20	480.14	522.59
1 Ռուբլի	6.84	6,80	6.42	7.02

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթի հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժութային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	31.12.2021թ. Ազդեցությունը		31.12.2020թ. Ազդեցությունը	
	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա
EUR ուժեղացում 10%-ով	(384,614)	(384,614)	(506,554)	(506,554)
USD ուժեղացում 10%-ով	(237,847)	(237,847)	(315,464)	(315,464)
RUB ուժեղացում 10%-ով	-	-	(1,763)	(1,763)

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք):

Ընկերության գործունեության բնույթից ելնելով՝ Ընկերությունը նշված ռիսկին որևէ նշանակալի ենթարկվածություն չունի:

26. Իրական արժեքի գնահատում

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ:

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

27. Պայմանական դեպքեր և հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

27.1. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության և պրակտիկայի վրա:

27.3. Դատական գործեր

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դեմ հարուցված կամ Ընկերության կողմից հարուցված դատական գործեր չեն եղել:

27.4. Երաշխավորություններ

Ընկերությունը կապակցված կազմակերպությունների ստանձնած վարկերի համար բանկերի հանդեպ հանդիսանում է երաշխավոր: Տարեվերջի դրությամբ այդպիս վարկերի մայր գումարը, որոնց նկատմամբ տարածվում է երաշխավորությունը, կազմում է 1,852,218 հազ. << դրամ: Միևնույն ժամանակ, այդ կապակցված կազմակերպությունները երաշխավոր են հանդիսանում Ընկերության վարկային պարտավորությունների համար՝ բոլորը բոլորի հանդեպ ստանձնելով համապարտ պարտավորություն:

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

«ԴԵՐԺԱՎԱ-Ս»
«DERJAVA-S»
«ДЕРЖАВА-С»

Ստանիսլավ Հովակիմյան

22 սեպտեմբեր, 2022թ.

Ռաֆաել Ավետիսյան